№ 26 Փետրվարի 23 (Մարտի 7) 1879 Փետրվարի 23 (Մարտի 7) № 26

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Թղթակցութիւնները ղրկվում են այսպէս
Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է ամեն օր 10–3 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողին 3 կոպէկ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աններելի անհոգութիւն.—Ներքին տեսութիւն. Նամակ խմբագրին. Նամակ խմբագրին. Նամակ խմբագրին. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—Արտաքին տեսութիւն. «Մշակի» թղթակցութիւնը. Անտարբերութիւններ Եւրոպայում. Նամակ Բեռլինից. Նամակ Բեռլինից.—Խառն լուրեր.—Յայտարարութիւններ.—Ցուցակ.

## ԱՆՆԵՐԵԼԻ ԱՆՀՈԳՈՒԹԻՒՆ

Երբ պատերազմի ժամանակ Ալաշկերտի հայերը սկսեցին գաղթել Թիւրքիայից դէպի Անդրկովկաս, Թիֆլիսում կազմվեցաւ մի մասնաժողով, որ հաւաքելով գումարներ օժանդակութիւն էր անում մեր կողմերը գաղթած ալաշկերտցիներին։

Այժմ գաղթականների մեծ մասը կրկին վերադարձան իրանց հայրենիքը, իսկ մասնաժողովի ձեռքում մնացել է հաւաքած փողերից զարմանալի մի քանակ նշանաւոր գումար, ինչպէս ասում են մօտ տասն հազար րուբլի։

Ի՞նչ դիտաւորութիւն ունի տանել այդ փողերի հետ մասնաժողովը։ Այդ մասնաժողովի անդամները վաղուց է չեն հաւաքվում, և ինչպէս երևում է, չեն էլ մտածում մի որ և է որոշում տալ իրանց ձեռքում մնացած նշանաւոր գումարի գործադրութեանը....

Ասենք թէ գումարը ապահով դրութեան մէջ է, նա բանկում դրված է մասնաժողովի ընթացող հաշւով, բայց այնուամենայնիւ, մեր կարծիքով, աններելի անհոգութիւն է մասնաժողովի անդամների կողմից թողնել գործը, առանց որոշում տալու թէ ի՞նչ նպատակին պիտի գործ դրվի գաղթականների փողերից մնացորդ գումարը։

Պատերազմի ժամանակ կազմված մասնաժողովը մի ժամանակաւոր հիմնարկութիւն էր։ Այժմ նրա գոյութեան շարունակելն էլ ոչինչ նշանակութիւն չունի։ Նոյն տարածից մարդս երեկ այսօր չը գիտէ թէ փողը ինչ կարող է պատահել։ Մասնաժողովի անդամներից մի քանիսը կարող են, մեռնել, միւսները գործերի պատճառով հեռանալ քաղաքից, երկրից....

Վերջապէս թողնել գումարը առանց որ և է նպատակի գործ դնելու, երբ իրականապէս մասնաժողովը դադարել է գոյութիւն ունենալուց, որովհետև այն նպատակը, որի համար նա կազմված էր, էլ գոյութիւն չունի,—թողնել գումարը անխնամ և աննպատակ, դա աններելի անհոգութիւն է։

Մեր կարծիքով մասնաժողովի, նրա նախագահի, կամ նրա բացակայութեամբ անդամներից մինի, վերջապէս քաղաքացի պարտաւորութիւնն է գումարել անդամներին և նուիրատուների ընդհանուր ժողովը, որպէս զի վճռվի ինչ գործին պէտք է նուիրել գաղթականների փողերից մնացորդ նշանաւոր գումարը։

Ընդհանրական և մի և նոյն ժամանակ օգտաւէտ նպատակները չեն պակաս։ Կարելի է նուիրել այդ փողերը «Հրատարակական ընկերութեանը» կամ Թիւրքաց հայերի մի այլ գաղթական ընկերութեան, կարելի է գործ ածել այդ գումարը որպէս հիմնական դրամագլուխ Թիֆլիսում Ներսէսի մարդասիրականի պէս մի ընկերութեան հիմնելու համար և այլն։

Ինչ և իցէ, պէտք է շտապել։ Ինչ էլ լինի նուիրատուների ընդհանուր ժողովի վճիռը, մենք այդ չը գիտենք, բայց պէտք է շտապել գումարել մասնաժողովի անդամներին, կամ գոնէ ընդհանուր ժողովը, շուտով վճռել փողի գործածութեան մասին։

Ընդարձակելի թողնելով այդ գումարը, մասնաժողովի անդամները մեծ պատասխանատուութեան են յանձն առնում, և ժամանակով կարող են փոշմանել իրանց աններելի անհոգութեան վրայ։

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Վաղարշապատ, 28 յունվ.

Ուղարկելով ձեզ 28 ր. 55 կ. յօգուտ «Արարատեան ընկերութեան» խնդրեմ տպագրել նուիրատուների անունները։—[illegible] Մաթէոսեան Մանուկեանց 3 րուբլի, իր աւագին տ. [illegible] Մանուկեանց 1 ր. իր հայր տ. [illegible] Մանուկեանց 1 ր., [illegible] Մանուկեանց 20 կոպ., [illegible] Մանուկեանց 3 ր. 20 կ., [illegible] 3 ր. 20 կ., [illegible] 2 ր. 20 կ., [illegible] 1 ր., [illegible] 1 ր., [illegible] 1 ր., [illegible] 1 ր., [illegible] 1 ր., [illegible] 1 ր., [illegible] 1 ր., [illegible] 1 ր., [illegible] Մանուկեանց 60 կ., [illegible] 50 կ., [illegible] 50 կ., [illegible] 35 կ., [illegible] 20 կ., [illegible] 20 կ., [illegible] 20 կ., [illegible] 20 կ., [illegible] 10 կ., [illegible] 10 կ., [illegible] 10 կ., որի վրա աւելացնելով և ես 3 ր. կը լինի ընդամենը 28 ր. 55 կ.

Ս. Տէր-Մինասեանց

### ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

[illegible], 4 փետրվարի

Ուղարկելով ձեզ 35 ր. յօգուտ «Արարատեան ընկերութեան» խնդրեմ տպագրել նուիրատուների անունները։—[illegible] 7 րուբլի, [illegible] 5 ր., [illegible] 3 ր., [illegible] 3 ր., [illegible] 3 ր., [illegible] 5 ր., Леонидъ Елизаровъ 5 ր., [illegible] 3 ր., Елена Тагеръ 1 ր., ընդամենը 35 րուբլի

Տ. [illegible]

### ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Գետաշէն, 6 փետրվարի

Ուղարկում եմ 49 րուբլի յօգուտ «Արարատեան ընկերութեան» որը ժողովեցի Գետաշէնի մեր հայ գիւղացիներից, [illegible] պ. խմբագիր, հաւատացէք այս գումարը որ հաւաքվել է և ձեր յօդվածի մէջ հրատարակեցէք նուիրատուների անունները։ [illegible] 10 րուբլի, [illegible] 5 ր., [illegible] 5 ր., [illegible] 5 ր., [illegible] 1 ր., [illegible] 1 ր., [illegible] 1 ր., [illegible] 1 ր., [illegible] 3 ր., [illegible] 1 ր., [illegible] 1 ր., [illegible] 5 ր., [illegible] 3 ր., [illegible] 1 ր., [illegible] 50 կոպէկ, [illegible] 3 ր., [illegible] 1 ր. ընդամենը է 49 ր. 50 կ. [illegible] 50 կոպ. Նուիրատուութիւնը շարունակվում է այստեղ [illegible] մէջ որը [illegible] հաւաքվելու։

[illegible]

### ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 20 փետրվարի

[illegible] «Մշակի» [illegible]

[illegible]

Դերենիկ Նիկողոսեան

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Кавказъ» լրագիրը տալիս է [illegible] ԹԻՖԼԻՍԻ [illegible] 1866 [illegible]